ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 61-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 13-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Սարքավորումների տեղադրման թույլտվության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.2. Ջերմուկ համայնքում առևտրի և սպասարկման ոլորտի գործունեության կանոններ սահմանելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան*

1.4. Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում՝ Հերհեր գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ջրային նշանակության հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու համար համաձայնություն տալու, տարեկան վճարի գինը և պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան*

1.5. Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան*

1.6. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան*

1.7. Հուղարկավորության կազմակերպման համար տրամադրված սոցիալական օգնության մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան*

1.8. Դրամական հատկացումներ կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան*

1.9. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի N 52-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան*

1.10. Ջերմուկ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.11. Ջերմուկ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ………9……… դեմ-………0……… ձեռնպահ- ……0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 62-Ա

## ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. 2009 թվականի հուլիսի 16-ին Ջերմուկի քաղաքապետարանի և «ԱրմենՏել» ՓԲ ընկերության (ներկայումս՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) միջև կնքված Սարքավորումների տեղադրման թույլտվության պայմանագրում կատարել փոփոխություն. պայմանագրի ժամկետը երկարաձգել 10 (տաս) տարով՝ մինչև 2029 թվականի հուլիսի 16-ը:

2. Սահմանել, որ եթե սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 1 (մեկ) ամիս առաջ պայմանագրի կողմերից մեկը մյուսին չի տեղեկացնում պայմանագրից հրաժարվելու իր մտադրության մասին, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված նույն ժամկետով և պայմաններով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 63-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ հոդվածի 40.1 և 41.2 կետերի պահանջները՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել Ջերմուկ համայնքում առևտրի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……9…… դեմ-……0…… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 64-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետին համապատասխան և հիմք ընդունելով Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 25.07.2019թ. թիվ 63 դրական եզրակացությունը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի տարածքում գտնվող Հերհեր գյուղի բնակիչ Վաչիկ Անդրանիկի Վարդազարյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, մակերեսը՝ 0,2 հա, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-0012-0005) փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | կողմ | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | կողմ | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......9...... դեմ-.....0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 65-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով, 74-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգծված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման 2-րդ կետը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում՝ Հերհեր գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0,01783 հա մակերեսով ջրային նշանակության հողամասը, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-3001-0007, մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 40000 (քառասուն հազար) դրամ, ժամկետը՝ 2044 թվականի հոկտեմբերի 1-ը, նպատակը՝ ջրատնտեսային, արդյունաբերական, կամ էներգետիկ կարիքների բավարարումն ապահովող օբյեկտի շինարարության և շահագործման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-......1...... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 66-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոցի N 1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 10-027-0014-0078 կադաստրային ծածկագրով 1,74574 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ այլ հողեր) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ խառը կառուցապատման համար, ամսական վարձավճարի մեկնարկային չափը՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 30 (երեսուն) տարի:

2. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոցի N 6 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 10-027-0014-0015 կադաստրային ծածկագրով 2,06491 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ այլ հողեր) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ խառը կառուցապատման համար, ամսական վարձավճարի մեկնարկային չափը՝ 30 000 (երեսուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 30 (երեսուն) տարի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……9…… դեմ-……0…… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 67-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ,ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

| հողամասի օտարման նպատակը | հողամասի գտնվելու վայրը | մակերեսը հա | մեկնարկային գինը, դրամ | հողամասի ծածկագիրը | նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը կամ հողատեսք |
|---|---|---|---|---|---|---|
| խառը կառուցապատման համար | գյուղ Կարմրաշեն, 17-րդ փողոց N 3 | 0,44909 | 1 000 000 | 10-027-0009-0050 | բնակավայրերի | այլ հողե |
| գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցման համար | գյուղ Կարմրաշեն, 17-րդ փողոց N 4 | 0,08543 | 200 000 | 10-027-0009-0051 | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցման համար | գյուղ Կարմրաշեն, 17-րդ փողոց N 5 | 0,45399 | 1 010 000 | 10-027-0014-0079 | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ |
| գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ | 0,11454 | 10 000 | 10-016-0208-0099 | գյուղատնտեսական | արոտավայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ | 0,06684 | 10 000 | 10-016-0208-0100 | գյուղատնտեսական | արոտավայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ | 0,10613 | 10 000 | 10-016-0220-0112 | գյուղատնտեսական | արոտավայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ | 0,0171 | 10 000 | 10-016-0220-0113 | գյուղատնտեսական | արոտավայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ | 0,60143 | 50 000 | 10-016-0605-0043 | գյուղատնտեսական | արոտավայր |
| գյուղատնտեսական գործունեության համար | գյուղ Գնդեվազ | 0,61113 | 50 000 | 10-016-0605-0045 | գյուղատնտեսական | արոտավայր |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կաղլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- …………9…. դեմ-…………0… ձեռնպահ- …0…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 68-Ա

### ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Նորոշման հավելվածի 14-րդ կետին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն, որ Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից հանգուցյալներ Յուրիկ Ասատրյանի, Նորիկ Միրզոյանի, Հայկանուշ Նիկալայանի, Մուրադ Հակոբյանի, Անուշ Աբրահամյանի, Սամսոն Վարագյանի և Շուշանիկ Հովհաննիսյանի (գ. Հերհեր) հուղարկավորությունների կազմակերպման համար 100 000-ական (հարյուր հազարական) դրամի սոցիալական օգնություն է տրամադրվել նրանց ընտանիքներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 69-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչների դիմումները և դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը, ինչպես նաև «ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի 2019 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝

*Ծովինար Սողոմոնյանին՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ*

*Վարդիթեր Հարությունյանին՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ*

*Աշոտ Զաքարյանին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ*

*Մարիամ Գասպարյանին՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ*

*Արմեն Հակոբյանին՝ 100 000 (հարյուր հազար) դրամ*

*Աշոտ Հարությունյանին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ*

*Հանգուցյալ ազատամարտիկ Գառնիկ Բունիաթյանի ընտանիքին՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ:*

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում Ջերմուկ քաղաքից աշխատանքի գնացող ուսուցիչների (թվով՝ 2 հոգի)տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու նպատակով Ջերմուկ համայնքի 2019 թվականի վարչական բյուջեից դրամական հատկացում կատարել յուրաքանչյուրին ամսական 15 000 (տասնհինգ հազար) դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի չի | մասնակցել | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......8...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 70-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» N 52-Ա որոշման մեջ՝

ա) *կատարել հետևյալ փոփոխությունը՝* որոշման 1-ին կետի «բ» ենթակետում «3.Բագրատյան Արտակ» բառերը փոխարինել «3. Բաբաջանյան Սանասար» բառերով,

բ) *կատարել լրացում՝* որոշման 1-ին կետի «բ» ենթակետը լրացնել նոր՝ հետևյալ ենթակետերով՝

*«4. Սաֆարյան Արա (Ջերմուկի ՍԱՏԲ պետ)՝ համաձայնությամբ*
*5. Վարդանյան Ստեփանոս (համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ)*
*6. Քոլյան Արևհատ (Ջերմուկի Մ. Գորկու անվան դպրոցի ուսուցչուհի, «Ապագայի շողեր» ՀԿ նախագահ)՝ համաձայնությամբ»:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | [signature] | [signature] | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կաղենի | | [signature] | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված չէ՝ կողմ- .......4....... դեմ-.......5....... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 71-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 06.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 346-Ն որոշման 22-րդ կետի պահանջով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը՝

ա) ի գիտություն ընդունելով, որ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական ղեկավարի նստավայրում (նախկինում՝ գյուղապետարանի շենք, հասցեն՝ գյուղ Գնդեվազ, 8-րդ փողոց, շենք N 1) տեղադրված ազդարարման համակարգի 1-ԼԴ-800 մոդելի շչակը, որպես գույքային արժեք, ամրագրվել է համայնքի հաշվեկշռում,

բ) ի գիտություն ընդունելով, որ Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 3/3 հասցեում գտնվող շինությունները՝ համայնքի ճոպանուղին սպասարկող ենթակառուցվածքները (սպասասրահ, դրամարկղ, տեխնիկական սպասարկման կետ, հարթակ, պարիսպ) որպես գույքային արժեք, ամրագրվել են համայնքի հաշվեկշռում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [illegible] հիվանդ է | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....8.... դեմ-....0.... ձեռնպահ- ....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2019թ. N 72-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի հետևյալ փոփոխությունների մասին առաջարկությունը. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002- «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 9606.336 հազար ՀՀ դրամն ուղղել՝

1.1 Բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002- «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4237 (ներկայացուցչական ծախսեր ) տնտեսագիտական հոդվածին 3000.0 հազար ՀՀ դրամ:

1.2 Բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53,210002-«Խողովակաշարային և այլ տրանսպորտ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4212 (էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածին 2556.336 հազար ՀՀ դրամով:

1.3 Բաժին 10, խումբ 07, դաս 01, ծրագիր 54, 210002- «Սոցիալական հատուկ արտոնություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4726 (հուղարկավորության նպաստներ բյուջեից) և 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից ) տնտեսագիտական հոդվածներին համապատասխանաբար 500.0 հազարական ՀՀ դրամ:

1.4 Բաժին 10, խումբ 04, դաս 01, ծրագիր 55, 210002- «Ընտանիքի անդամներ և զավակներ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4729 (այլ նպաստներ բյուջեից) տնտեսագիտական հոդվածին 300.0 հազար դրամ:

1.5 Բաժին 06, խումբ 04, դաս 01, ծրագիր 51, 210002- «փողոցային լուսավորվածություն» գործառնական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածին 2750.0 հազար դրամ՝ Ջերմուկ քաղաքային բնակավայրի փողոցային լուսավորվածության համար 2500.0 հազար ՀՀ դրամ, Գնդեվազ գյուղական բնակավայրի համար՝ 250.0 հազար ՀՀ դրամ:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունները կատարվել են «4237 (ներկայացուցչական ծախսեր տնտեսագիտական հոդվածում, պայմանավորված են պարտվիրակությունների ընդունելության, գիշերակացի, օրապահիկի ծախսերը հոգալու նպատակով. 4729, 4727, 4726 (հուղարկավորության, կրթական, մշակութային, սպորտային, այլ նպաստներ բյուջեից, սոցիալական արտոնություններ ոլորտում) տնտեսագիտական հոդվածներում՝ դիմումատուների քանակի ավելացմամբ, 4212-(էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածով՝ լամպերի և ժամային գոտիների ավելացմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | չի քվեարկել | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……8…… դեմ-…0……… ձեռնպահ- …0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 սեպտեմբերի 13
Ջերմուկ